

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 25

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 12.02. 2018թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 29 (քսանինն) անդամից 26-ը (քսանվեցը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Մինասյան Սահակ Գարուշի** — Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Ֆարմանյան Անահիտ Ժորայի** — Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
4. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
6. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
7. **Տոնոյան Երվանդ Պարույրի** — Ռազմական ամբիոնի պետի տեղակալ-ուսումնական մասի պետ
8. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** — Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
9. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
10. **Քալաշյան Ռաֆֆի Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
11. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
12. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
13. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր

14. **Մարդոջան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
15. **Մելիքյան Թամարա Հմայակի-** Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակ.-ի դեկան, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
16. **Տեր-Ադամյան Շուշանիկ Վուրդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
17. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
18. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
19. **Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ
20. **Արամյան Կարեն Արմենի** — ՇՊՀ ՈԻԽ նախագահ, ռազմական ամբիոն «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող
21. **Խաչատրյան Լիլիթ Վարդանի**— Մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և մեթոդիկա», 4-րդ կուրսի ուսանողուհի
22. **Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
23. **Կոստանյան Նինա Կարապետի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Մաթեմատիկա» 4-րդ կուրսի ուսանողուհի
24. **Հարությունյան Քաջիկ Հակոբի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 1-ին կուրսի ուսանող (մագիստրատուրա)
25. **Մելքոնյան Արմեն Գրիգորի** — Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)
26. **Չարչոլյան Արթուր Էդվարդի** — Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի

ՕՐԱԿԱՐԳ

1. «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հովհաննես Խորիկյանի հայտարարած հացադուլի պատճառով բուհում ստեղծված իրավիճակի քննարկման մասին

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

2. 1. «ՇՈՂ» հիմնադրամի ֆակուլտետների ղեկանների և ամբիոնի վարիչների ընտրություններ (Բնագիտամաթեմատիկական, սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետներ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն անգլերեն լեզվի և գրականության ամբիոն)

2.2 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտ. թեկնածու Շուշանիկ Բսկանդարի Ալվաջյանին դոցենտի կոչում շնորհելու մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ առաջարկվող որոշ ձևակերպումների և մասնակի անճշտությունների փոփոխությունների մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

4. «ՇՈՂ» պահպանվող և արխիվացվող փաստաթղթերի ցանկը՝ ժամկետների նշումով՝ փաստաթղթի հաստատման մասին

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

5. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) թեմաների մրցույթում հայտի ներկայացում

Հաղ.՝ Ֆ. մ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր **Ս. Մարգարյան**

6. 2017-2018 ուստարում կցագրված հայցորդների ուսումնական- հետազոտական անհատական պլանների, գիտական ղեկավարների և թեմաների հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

1. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հովհաննես Խորիկյանի հայտարարած հացադուլի պատճառով բուհում ստեղծված իրավիճակի քննարկման մասին

Հաղ.՝ ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց, որ այն, ինչ կատարվում է այսօր համալսարանում, հինգ ամիսների ընթացքում բուհում տեղի ունեցած դեպքերի տրամաբանական շարունակությունն է: Հավելվեց, որ ինքը չի պատրաստվում այս պահին անձնավորելու և դատապարտելու պարոն Խորիկյանի արարքը մի պարզ պատճառով, որ այն ավելի քան ակնառու է և ակներև բուհի բոլոր աշխատակիցների համար, թե այս ամենն ինչի հետևանք է, ինչ պահանջ ու տրամաբանություն ունի: Հովհաննես Խորիկյանի՝ որպես ամբիոնի վարիչի և դասախոսի պահվածքը մտավորականին վայել չէ, և ըստ ռեկտորի՝ այն ուղղված է սևացնելու բուհում կատարվող աշխատանքները:

Ս. Մինասյանը նշեց, որ արդեն հինգ ամիս է համալսարանի երկու դասախոսների կողմից նույնիսկ անձնական վիրավորանքներ են գրառվում իր հասցեին, սակայն ինքն անհաղորդ է մնացել դրանց՝ համալսարանի աշխատանքը չխաթարելու համար:

Ս. Մինասյանը նշեց, որ երբ գիտական խորհուրդն իր որոշմամբ միջնորդեց ռեկտորին՝ Հովհաննես Խորիկյանին ամբիոնի վարիչի պաշտոնում անվստահություն հայտնելուն, ինքը չգնաց այդ քայլին և, ավելին, վերջերս նա ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց: Այնինչ Հովհ. Խորիկյանը դարձյալ շարունակում է իր սեփական ամբիցիաների տեսանկյունից թույլ տալ նման վարքագիծ՝ հայտարարելով հացադուլ նույնիսկ և ուսանողներից զրկելով դասապրոցեսի բնականոն ընթացքից: Ռեկտորը նշեց, որ ինքն անձամբ հանդիպել ու քննարկել է Խորիկյանի հետ բուհին վերաբերող, ըստ վերջինիս, որոշ վիճելի հարցեր, սակայն ապարդյուն, ինչն էլ թույլ է տալիս մտածելու, որ այս ամենն

ուղղված է համալսարանի առաջընթացը. (որը բոլորիս համար տեսանելի է) կասեցնելու:

Ռեկտորի նկատումով, վերջին օրերին Հովհ. Խորիկյանի կողմից բարձրաձայնաձ հարցը՝ կանոնադրության հետ կապված, նույնպես շինծու է, քանզի դրա հաստատման ժամանակ որպես գիտական խորհրդի անդամ ինքը նույնպես կողմ է քվեարկել և համալսարանի երեք դեկանների ընտրություն կազմակերպվել է նույն կանոնադրության համապատասխան դրույթներով: Ինչ վերաբերում է կանոնադրության և կանոնակարգի մեջ եղած որոշ անհամապատասխանություններին, դրանց քննարկումն այսօր օրակարգային հարց է, որը քննարկվելուց հետո կներկայացվի Հոգաբարձուների խորհուրդ:

Ռեկտորը նշեց, որ մենք աշխատում ենք մեկ սկզբունքով՝ գլխավոր արժեքը մարդն է, բայց այսօր մարդն իր առողջությունն է գոհում՝ գնալով ծայրահեղ քայլի: Ինքը շատ է ցավում այս միջադեպի համար, քանի որ պարոն Խորիկյանը պատասխանատու է առաջին հերթին իր ընտանիքի և երեխաների առջև: Նրա այս քայլը Ս. Մինասյանի կողմից դատապարտելի է: Ըստ Ս. Մինասյանի՝ այսօր չենք կարող մատնանշել մի գործառույթ, որտեղ բուհը նահանջ է գրանցել և ավստսում է, որ նոր տարում վերանորոգված դահլիճում արդեն յոթ անգամ մշակութային, ճանաչողական, ժամանցային, սպորտային և այլ կարգի միջոցառումներ կազմակերպելով հանդերձ, բուհի միայն երկու աշխատակիցների գրառումների պատճառով համալսարանի հեղինակությունն է կարծես խաթարվում: Մակայն բոլորիս էլ տեսանելի է, որ այսօր կատարված բազմաբնույթ աշխատանքների արդյունքում բուհը գնում է զարգացման ճանապարհով: Ռեկտորը նշեց, որ վերոնշյալ երկու աշխատակիցների «ջանքերով» արդեն հինգերորդ ամիսն է բուհում շարունակվում են ստուգումները տարբեր ինստանցիաներից և համապատասխան փաստաթղթերի ներկայացումը տարբեր գերատեսչությունների, որի հետևանքով համալսարանում տիրում է լարված մթնոլորտ: Ս. Մինասյանը հավելեց նաև, որ Հովհ. Խորիկյանին այնքան դրդեցին նրա հետևում կանգնած ուժերը, որ գնաց նման ծայրահեղ քայլի՝ մտածելով որ այլևս ետ դառնալ չի կարող, բայց ետ դառնալ միշտ էլ կարելի է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության

կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր՝ Ա. Ֆարմանյանը նշեց, որ այսօրվա վիճակը բոլորիս մոտ էլ լարվածություն է առաջացրել, սակայն Հովհ. Խորիկյանը վերջիվերջո մեր գործընկերն է, հացադուլ հայտարարելով գնացել է ծայրահեղ քայլի: Ֆարմանյանը նշեց, որ ֆակուլտետային խորհրդում, երբ քննարկվում էր դեկանի ընտրության հարցը, պարոն Խորիկյանը համաձայն չէր գիտական խորհրդում անցկացնել ֆակուլտետների դեկանների և ամբիոնի վարիչների ընտրությունները և ըստ տիկին Ֆարմանյանի՝ կանոնադրության ու կանոնակարգերի միջև կան մասնակի հակասություններ: Այդ իսկ պատճառով էլ առաջարկեց այսօրվա ընտրությունները հետաձգել մինչև կանոնադրության որոշ դրույթների հստակեցումն ու փոփոխումը:

Ռեկտոր Ս. Մինասյանը հակադարձեց, որ հակասությունն այստեղ վերաբերում է միայն կանոնադրության մեկ կետին, և ըստ կանոնակարգի՝ մենք շարունակելու ենք մեր գործառույթը, իսկ պարոն Խորիկյանին խորհուրդ ենք տալիս դիմելու դատարան, եթե վերջինս գտնում է, որ անօրինական ընտրություններ են անցկացվելու:

Ռեկտոր Ս. Մինասյանը ներկայացրեց ևս երկու նկատառում, նշելով, որ ընդամենը երկու ժամ առաջ այս նույն լսարանում ինքը դասախոսություն էր կարդում, խոսելով համակարգման մասին, համակարգերի համակարգման, համակարգերի վերլուծության մասին և գտնում է, որ նույն ձեռագիրն է. պարոն Խորիկյանը անձամբ պրոռեկտորների հետ ուսումնական պլանները մշակեց, հաստատելուց հետո ասաց, որ դրանք սխալ են, այս կանոնակարգը հաստատելուց կողմ քվեարկեց, այնուհետև հայտարարեց, որ սխալ է, ուսանողներին էլ ապակողմնորոշեցին, որ վարձավճարները չի զեղչվելու, սակայն բացարձակ արժեքով երկու անգամ ավելի շատ է զեղչվել, քան նախորդ տարի: Այնուհետև ռեկտորը նշեց, որ պայքարի նման ձևը մտավորականին հարիր չէ, դրա համար կան համապատասխան մարմիններ, մենք ապրում ենք իրավական երկրում,, բացի

դրանից մեկ անգամ ինքը՝ ռեկտորը, գիտական խորհրդի միջնորդությունը չի ընդունել Խորհլյանին անվստահություն հայտնելու առումով, սակայն երկրորդ անգամ ընդունելու է, քանի որ բուհի հեղինակությունն է արդեն վարկաբեկվում և այսքան ձեռքբերումները դառնում են առ ոչինչ: Ռեկտոր Ս. Մինասյանը շարունակեց միտքը, որ, ով իրեն հոգեցավ է զգում, թող խոսի պարոն Խորհլյանի հետ, մարդուն ուղղորդի, որ իր խնդիրը լուծի իրավական ճանապարհով, վերջապես Խորհլյանի վերաբերմունքը բոլորին է ուղղված և բոլորն են տեսնու մ, թե ինչ է կատարվում բուհում. պարոն Խորհլյանը արտոնյալի կարգավիճակով երբ ուզում է աշխատանքից բացակայում է և ըստ ռեկտորի, ամեն ինչ իր ժամանակն ունի, այս ամենը հատուկ արվում է ձախողելու համալսարանի բնականոն ռիթմը:

Արհմիության նախագահ՝ Վ. Խաչատրյանը նշեց, որ ինքը որպես արհմիության նախագահ անձամբ կկանգնի այն մարդկանց կողքին, ովքեր մտահոգ են բուհի համար: Հինգ ամիս շարունակաբար բուհի ռեկտորի, գիտական խորհրդի, աշխատակիցների հասցեին հնչեցված վարկաբեկիչ խոսքերն ու գրառումները համալսարանում լարված բարոյահոգեբանական մթնոլորտ են ստեղծել, և եթե որևէ մեկին թվում է, որ այս ամենն իրեն չի վերաբերում, ապա սխալվում է, քանի որ անտարբեր վերաբերմունքը այս պարագայում խիստ վտանգավոր է: Խաչատրյանը հարցն ուղղեց գիտական խորհրդի անդամներին, թե մինչև երբ պետք է շարունակվի այս վիճակը, ինչքան կարելի է հանդուրժել նման վերաբերմունքն ուղղված բուհի մտավորականներին: Վ. Խաչատրյանն հավելեց, որ ինքը բացարձակ կողմ է նրան, որ եթե գրառողները ճիշտ են, ապա պատասխանատվություն թող կրեն մեղավորները, իսկ եթե նրանք զրպարտում են մի ամբողջ հանրույթի, ապա պետք է խստագույնս պատասխանատվության ենթարկվեն:

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյանը նշեց, որ իրենք պարտավոր են արձագանքելու գրառումներին, այլևս հնարավոր չէ, լսել ու կարդալ այս ամենը: Տիկին Մելիքյանը ավելացրեց, որ ինքն արդեն երեսուն տարի աշխատում է բուհում և դեկանի ու ամբիոնի վարիչի ընտրություններն երբևիցե չեն անցկացվել ֆակուլտետային խորհրդում, ինչպես պահանջում են Հովհ. Խորհլյանն ու Գ. Համբարյանը:

Ռեկտոր Ս. Մինասյանը հավելեց, որ ֆակուլտետային խորհուրդը շատ նշանակալի դեր ունի բուհում: Քանի որ մեզ մոտ պրոֆեսորադասախոսական կազմը կոչումների առումով ավելի սակավ է, քան օրինակ ԵՊՀ-ում, որտեղ ամբիոնի վարիչի, դեկանի ընտրություններն իրականացվում են ֆակուլտետային խորհուրդներում, այդ իսկ պատճառով մեր բուհում ցանկալի է, որ նման ընտրություններն անցկացվեն գիտական խորհրդում:

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող, «Բանականության բանալի» ակումբի նախագահ՝ Ա. Չարչոլյանը նշեց, որ որպես ուսանող՝ հաղորդակցվել է պատմության բաժնի այն ուսանողների հետ, որոնք այսօր դաս չեն պարապել և տեղեկացնում է, որ ուսանողները բողոքում են, որովհետև իրենք ուսման վարձ են վճարում՝ բաց թողնելով այն դասերը, որոնք դասավանդվում են Հովհ. Խորիկյանի կողմից:

Ռեկտոր Ս. Մինասյանը արձագանքեց, որ վաղվանից լրացական դասընթացներ կկազմակերպվեն՝ չպարապած դասերը լրացնելու համար:

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ՝ Լ. Հակոբյանը նշեց, որ ցանկալի է բանակցություններ սկսել Հովհ. Խորիկյանի և բուհի գիտական խորհրդի անդամների միջև՝ այս լարվածությունը թոթափելու համար:

Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչի ԺՊ՝ Կ. Սահակյանն առաջարկեց, որ բուհի հեղինակավոր պրոֆեսոր Ս. Սարգսյանի ղեկավարությամբ պատվիրակություն կազմվի, որպեսզի զրուցեն պարոն Խորիկյանի հետ՝ հացադուրը դադարեցնելու և բնականոն աշխատանքի վերադառնալու:

Ռեկտոր Ս. Մինասյանն առաջարկեց, որ պարոն Սարգսյանն ինքը որոշի, թե ում հետ գնա Հովհ. Խորիկյանի հետ բանակցելու:

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյանն նշեց, որ ինքը դպրոցում Խորիկյանին դասավանդել է և կարող է ինքն էլ միանալ խմբին նրա հետ խոսելու:

Գիտական քարտուղար Կ. Պետրոսյանն առաջարկեց գիտական խորհրդի անունից հանդես գալ հայտարարությամբ՝ կապված վերջին հինգ ամիսների

ընթացքում համալսարանում տիրող իրավիճակի և բուհի երկու աշխատակիցների կողմից շարունակական գրառումների վերաբերյալ:

Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր՝ Ե. Մերոբյանն առաջարկեց հանդես գալ նաև կոչով՝ ուղղված Հովհ. Խորիկյանին՝ հացադուլը դադարեցնելու և բնականոն աշխատանիքի վերադառնալու հորդորով:

Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր՝ Ա. Հովհաննիսյանի հավելումով՝ լրատվության միջոցները կամ ստուգումների եկած անձինք մշտապես լսում են միայն համալսարանի երկու դասախոսներին՝ Հովհ. Խորիկյանին և Գագիկ Համբարյանին՝ երբևիցե չլսելով գիտական խորհրդի անդամներից և ոչ մեկին: Նրա կարծիքով, ցանկալի կլիներ, որ լսեին նաև գիտական խորհրդի անդամների կարծիքը համալսարանին վերաբերող ստահոտ լուրերի գրառումների և բուհում կատարվող աշխատանքների վերաբերյալ:

Ա. Հովհաննիսյանը նշեց նաև, որ այս ամենը բուհի հեղինակությանը այնքան է վնասում, որ ուղղակիորեն կազդի նաև դիմորդների թվի վրա, արդյունքում համալսարանի հանրույթը կկորցնի իր աշխատանքը, որով այսօր ընտանիք է պահում:

Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր՝ Ա. Ֆարմանյանը նշեց, որ այսուհետ նման վիրավորանքներ և միջադեպեր չգրանցելու համար բուհի գիտական խորհուրդը հարկ է, որ ընդունի և կիրառի էթիկայի սկզբունքները, քանի որ չենք կարող մարդուն արգելել իր նկատառումները ֆեյսբուքյան էջում գրառելու:

Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ՝ Լ. Մարտիրոսյանը նշեց, որ հանրապետության գրեթե բոլոր լրատվամիջոցները լուսաբանում են այս միջադեպը, բացի մեր բուհի լրատվամիջոցից, որը չգիտես ինչու լռում է:

Ռեկտոր Ս. Մինասյանն ասաց, որ ինքն առիթը օգտագործելով պետք է առաջարկի, որ գիտական խորհրդի այսօրվա նիստում քննարկվի ռեկտորի մամուլի խոսնակ ունենալու հարցը, այնուհետև դիմելու է հոգաբարձուների խորհուրդ՝ կառուցվածքում փոփոխություն կատարելու համար:

Գիտական խորհրդի անդամների կողմից հավանության արժանացավ մամուլի խոսնակ ունենալու հարցը:

Ռեկտոր Ս. Մինասյանը նշեց, որ բուհի հասարակության հետ կապերի և լրատվության բաժնի գլխավոր մասնագետ Աննա Մարտիկյանը մամուլի խոսնակ չի կարող աշխատել, քանի որ Հ1 հեռուստաընկերության սեփական թղթակիցն է:

Պարոն Մինասյանը առաջարկեց քվեարկության դնել վերոնշյալ հարցը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ. Կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյանը նշեց, եթե մենք գնայինք այն քայլին, որ ընդունեյինք Հ. Խորիկյանի և Գ. Համբարյանի պահանջները և դեկանների ու ամբիոնի վարիչների ընտրությունները կազմակերպեյինք ֆակուլտետային խորհրդի նիստով, արդյոք կլռեյին նրանք, ինքը կարծում է, որ ոչ՝:

Տիկին Ֆարմանյանը արձագանքելով Թ. Մելիքյանի հարցադրմանը ասաց, որ չէին լռի, սա ընդամենը պատճառ է:

Ռեկտոր Ս. Մինասյանը նույնպես համաձայնեց տիկին Ֆարմանյանի հետ, որ այո՛, դա միայն պատճառ է և նշեց, որ թիրախը խայտառակելն է, պարոն Համբարյանը հրապարակում է փաստաթղթեր, որոնք ոչ մի տեղ բաց չկան դրված և հարց է ծագում, թե որտեղից է նա դրանք ձեռք բերում:

Տիկին Ֆարմանյանը նկատեց, որ նախկին ռեկտորի գործավարը հրապարակել էր սոցիալական ցանցով տեղեկատվություններ կապված համալսարանի հետ:

Ռեկտոր Ս. Մինասյանը հակադարձեց, որ այդ նույն Լենան երկու անգամ գրեց և այլևս չգրեց, սակայն պարոն Համբարյանը շարունակում է նոր փաստաթղթեր հրապարակել, ընդհուպ աշխատավարձերի ցուցակը, հարց է ծագում, որտեղից է նա ձեռք բերել այդ ցուցակը:

Լ. Մարտիրոսյանը հարց ուղղեց, եթե պարոն Համբարյանի կողմից շարունակվեն վարկաբեկիչ գրառումները, ինչ քայլերի է կարելի դիմել:

Ռեկտոր Ս. Մինասյանը պատասխանեց, որ ՀՀ աշխատանքային օրենսդրության կարգապահական կանոնները թույլ տալիս են իրեն, աշխատողների նկատմամբ համապատասխան կարգապահական տույժեր կիրառելու, ինքը այսօր էլ կարող էր

պարոն Խորիկյանի նկատմամբ դասապրոցեսը խաթարելու, չպարապելու համար դիմել այդ քայլին, սակայն դա չի անում, լարվածությունը չսրելու համար:

Ա. Մարգարյանը հարց ուղղեց ռեկտորին, թե կարող են պայմանավորվել, որ հաջորդ իսկ հրապարակման դեպքում ռեկտորը կդիմի այդ քայլին:

Ռեկտորը համաձայնություն տվեց և առաջարկեց քվեարկել, որ հաջորդ իսկ վարկաբեկիչ հրապարակման դեպքում ստեղծել էթիկայի հանձնաժողով՝ բուհի երկու դասախոսների պահվածքը քննարկելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ. Կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ՝ Ա. Մկրտչյանը նշեց, որ առանց էթիկայի հանձնաժողովի էլ կարելի է գործել, քանի որ նման դրույթ ՀՀ աշխատանքային օրենսգրքով ամրագրված է:

Տիկին Ֆարմանյանը չհամաձայնվեց պարոն Մկրտչյանի հետ, ասելով, որ աշխատանքային օրենսգրքով աշխատակիցների նկատմամբ անվստահություն հայտնվում է միայն այն դեպքում, երբ կազմակերպությանը լուրջ ֆինանսական վնաս է հատուցվում:

Պարոն Մկրտչյանը չհամաձայնեց տիկին Ֆարմանյանի ասածի հետ:

Գիտական խորհուրդն ընդունեց հայտարարությամբ և կոչով հանդես գալու որոշում, դրանք բուհի կայքում, ֆեյսբուքյան էջում և տարբեր լրատվամիջոցներով տարածելու համար (ստորև ներկայացվում են հայտարարության և կոչի տեքստերը):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ. Կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Դուրս գալով համալսարանում ստեղծված իրավիճակից, գիտական խորհրդի անունից հանդես գալ հայտարարությամբ ու պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ Հովհաննես Խորիկյանին ուղղված կոչով՝ դրանք տեղադրել բուհի կայքում, ֆեյսբուքյան էջում և տարածել տարբեր լրատվամիջոցներով (ստորև ներկայացվում են հայտարարության և կոչի տեքստերը):

2. Այսուհետ բուհի հեղինակությունը վարկաբեկելու և մարդու արժանապատվությունը վիրավորելու պարագայում հրավիրել գիտական խորհրդի

արտահերթ նիստ ` հարցը քննարկելով «Էթիկայի սկզբունքներ»-ին (ՇՊՀ -ի 2017թ-ի հունվարի 30-ի գիտական խորհրդով հաստատված) համապատասխան:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ. Կողմ` 26, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Կո՛չ ՇՊՀ -ի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ Հովհաննես Խորիկյանին.

Պարո՛ն Խորիկյան, հորդորում ենք դադարեցնել հացադուլը և անցնել բնականոն աշխատանքի:

Հայտարարություն

Հարգելի՛ ընկերներ.

Վերջին շրջանում Շիրակի պետական համալսարանին վերաբերող անհիմն շահարկումները ցավալիորեն դարձել են համապետական քննարկման խնդիրներ:

Համալսարանի գիտական խորհուրդը, առաջնորդվելով մտավորականներին հարիր ողջախոհությամբ, հինգ ամիսների ընթացքում կուտակված լռությունը փարատելով և հաշվի առնելով բուհում պարբերաբար կատարվող ստուգումները, անթաքույց հայտարարում է, որ մենք մեր համակազմով լծված ենք իրավաչափ ու բնականոն աշխատանքի:

Վեր մնալով սադրանքներից՝ բուհի գիտական խորհուրդը հայտարարում է, որ համալսարանն այսօր գնում է զարգացման ճանապարհով և այս հարցերով մտահոգ ցանկացած մեկին հրավիրում՝ տեղում ծանոթանալու կատարված աշխատանքներին:

ՇՊՀ-ի գիտական խորհուրդ

2. 1 ԼՍԵՑԻՆ՝

2. «ՇՊՀ» հիմնադրամի ֆակուլտետների ղեկանների և ամբիոնի վարիչների ընտրություններ (Բնագիտամաթեմատիկական, սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետներ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոն, անգլերեն լեզվի և գրականության ամբիոն)

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի
տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Ֆակուլտետների դեկանների և ամբիոնի վարիչների թափուր տեղերի թեկնածուների
ցուցակը ներկայացնելուց հետո Ս. Մինասյանը խոսքը փոխանցեց համալսարանի
մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանին, ում հաղորդմամբ՝

ա/բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար
դիմել է բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ, մաթեմատիկայի,
ֆիզիկայի և տեղ. տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ.գիտ. թեկնածու.,
դոցենտ Բագրատ Ժորայի Պողոսյանը,

բ/ Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկանի թափուր
պաշտոնի համար դիմել է սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի
դեկանի ԺՊ, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Օֆելյա Հայկազի Հովհաննիսյանը,

գ/ Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար
դիմել է անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության
ամբիոնի պրոֆեսոր Անահիտ Սերյոժայի Հովհաննիսյանը,

դ/ Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչի թափուր
պաշտոնի համար դիմել է աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի
ամբիոնի վարիչի ԺՊ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Լևոն Մովսեսի
Մարտիրոսյանը:

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համապատասխան ձևայնացված կարգավիճակները
զբաղեցնելու համար դիմած թեկնածուների ինքնակենսագրությունները, վերջին 5
տարիների ընթացքում նրանց հրատարակած գիտական աշխատանքների թիվը:

Չայնը տրվեց բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ-ին՝

ա/բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ, մաթեմատիկայի,
ֆիզիկայի և տեղ. տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ.գիտ. թեկնածու.,

դոցենտ Բագրատ Ժորայի Պողոսյանը ներկայացրեց բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի հնգամյա զարգացման ծրագիրը:

բ/ Սոցիալական գիտությունների և իրավունքի դեկանի ԺՊ, բան.. գիտ. թեկնածու, դոցենտ Օֆելյա Հայկազի Հովհաննիսյանը ներկայացրեց սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հնգամյա զարգացման ծրագիրը:

գ/ Անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր Անահիտ Սերյոժայի Հովհաննիսյանը ներկայացրեց անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի հնգամյա զարգացման ծրագիրը:

դ/ Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչի ԺՊ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանը ներկայացրեց աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի հնգամյա զարգացման ծրագիրը:

Դեկանների և ամբիոնի վարիչների թեկնածուներին ուղղվեցին հարցեր ֆակուլտետի հնգամյա զարգացման ծրագրի դրույթներից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Կազմակերպել բնագիտամաթեմատիկական, սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետների դեկանների և անգլերեն լեզվի և գրականության, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնների վարիչների ընտրության փակ գաղտնի քվեարկություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը գիտական խորհրդի անդամներին փակ գաղտնի քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի

անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝

1. Խաչատրյան Վալերի - նախագահ
2. Խաչատրյան Թերեզա ,
3. Մելքոնյան Արմեն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Խաչատրյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Պողոսյան Բագրատ Ժորայի	25	1	0
2.	Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի	25	1	0
3.	Հովհաննիսյան Անահիտ Մերյաժայի	26	0	0
4.	Մարտիրոսյան Լևոն Մովսեսի	23	2	1

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել՝ հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղ. տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտ. թեկնածու., դոցենտ Բագրատ Ժորայի Պողոսյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի պաշտոնում,

3. Բան. գիտ. թեկնածու, դոցենտ Օֆելյա Հայկազի Հովհաննիսյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկանի պաշտոնում,

4. Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր Անահիտ Սերյոժայի Հովհաննիսյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնում,

5. Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Լևոն Մովսեսի Մարտիրոսյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. 2 ԼՍԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտ. թեկնածու Շուշանիկ Բսկանդարի Ալվաջյանին դոցենտի կոչում շնորհելու մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդին և համապատասխան փաստաթղթերը:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1.	Շուշանիկ Բսկանդարի Ալվաջյան	Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս,	Ա.02.04 – «Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա»

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն, որի կազմակերպման համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած

հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Վալերի Խաչատրյան (նախագահ), Թերեզա Խաչատրյան, Արմեն Մելքոնյան (անդամներ):

Քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վալերի Խաչատրյանը ներկայացրեց հետևյալ արդյունքը.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Ղեմ	Անվավեր
1.	Շուշանիկ Իսկանդարի Ալվաջյան	23	3	0

Հաշվի առնելով, որ ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ-ի գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 26-ը. կողմ՝ 23, դեմ՝ 3, անվավեր՝ 0) Շուշանիկ Իսկանդարի Ալվաջյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ Ա.02.04 – «Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՄԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ առաջարկվող որոշ ձևակերպումների և մասնակի անճշտությունների փոփոխությունների մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

Տիկին Ֆարմանյանը ներկայացրեց, որ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ առկա են որոշ ձևակերպումների մասնակի անճշտություններ, որոնք տեղիք են տալիս տարաբնույթ արհեստածին շահարկումների և մեկնաբանությունների: Ուստի անհրաժեշտություն է առաջանում կանոնադրության որոշ հիմնական հասկացությունների և գործընթացների մեկնաբանությունների ճշգրտում, որը պահանջում է կանոնադրության տեքստի առանձին կետերի մասնակի վերաձևակերպում՝ երկիմաստ ընկալումներն ու

մեկնաբանությունները բացառելու և գործընթացների իրականացման ճշգրտությունն ապահովելու համար:

Տիկին Ֆարմանյանը հավելեց, որ գիտական խորհրդի անդամներին նախօրոք էլեկտրոնային տարբերակով ուղարկվել են կանոնադրության մեջ առաջարկվող փոփոխությունները, գիտական խորհրդում հաստատվելուց հետո այն կներկայացվի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:

**«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության մեջ
առաջարկվող փոփոխություններ**

N	Կանոնադրության կետը և ենթակետը	Ներկայիս տարբերակ	Առաջարկվող փոփոխություն
1	5-րդ կետի 6-րդ ենթակետ	5.ՇՊՀ-ի անվանումն է՝ 6)անգլերեն կրճատ՝ «SSU» Foundation	5.ՇՊՀ-ի անվանումն է՝ 6)անգլերեն կրճատ՝ «ShSU» Foundation
2	48-րդ կետի 9-րդ ենթակետ	48.Գիտական խորհուրդը՝ 9)շնորհում է գիտական կոչումներ, հաստատում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթներ ի արդյունքները	48.Գիտական խորհուրդը՝ 9)շնորհում է գիտական կոչումներ, կազմակերպում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթները, լսում ֆակուլտետների դեկանների ամենամյա հաշվետվությունները՝ գնահատելով նրանց գործունեությունը
3	50-րդ կետ	Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները և ՇՊՀ-ի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները...	Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները և ռեկտորի նշանակմամբ ՇՊՀ-ի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները...
4	98-րդ կետի 3-րդ ենթակետ	98.Ֆակուլտետի խորհուրդը՝ 3)սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի ընտրությունը	98.Ֆակուլտետի խորհուրդը՝ 3)սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի հավակնորդների թեկնածությունների քննարկումը
5	98-րդ կետի 4-րդ ենթակետ	98.Ֆակուլտետի խորհուրդը՝ 4)լսում է ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը	98.Ֆակուլտետի խորհուրդը՝ 4)լսում է ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը
6	98-րդ կետի 5-րդ ենթակետ	98.Ֆակուլտետի խորհուրդը՝ 5) ՇՊՀ-ի գիտական խորհրդի ընդունած օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը	98.Ֆակուլտետի խորհուրդը՝ 5) ՇՊՀ-ի գիտական խորհրդի ընդունած օրինակելի կանոնադրության հիման վրա քննարկում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի կանոնադրությունը

7	99-րդ կետ	...Ֆակուլտետի գիտատնտեսամեթոդական խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:	...Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:
8	102-րդ կետ	Դեկանն ընտրվում է գիտական խորհրդում՝ փակ գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի խորհրդում ամենաշատը, բայց առնվազն մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներ հավաքած անհատն :	Դեկանն ընտրվում է գիտական խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ՝ 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում գիտական խորհրդում ամենաշատը, բայց առնվազն մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: ...
9	103-րդ կետի 2-րդ ենթակետ	103.Ֆակուլտետի դեկանը՝ 2)ապահովում է ՇՊՀ-ի մարմինների և ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումների կատարումը	103.Ֆակուլտետի դեկանը՝ 2)ապահովում է ՇՊՀ-ի մարմինների և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը
10	103-րդ կետի 3-րդ ենթակետ	103.Ֆակուլտետի դեկանը՝ 3)ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների և ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի թեկնածությունները	103.Ֆակուլտետի դեկանը՝ 3)ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների (եթե այդպիսիք կան) և ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները
11	110-րդ կետ	Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է բաց մրցույթի հիման վրա , գաղտնի քվեարկությամբ, մինչև 5 տարի ժամկետով: ...	Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է բաց մրցույթով՝ գիտական խորհրդի նիստում , գաղտնի քվեարկությամբ, մինչև 5 տարի ժամկետով: ...
12	116-րդ կետ	ՇՊՀ-ի աշխատողները բաժանվում են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական համակազմ (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), գիտական աշխատողներ, վարչական...	ՇՊՀ-ի աշխատողները բաժանվում են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական) համակազմ (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս), գիտական աշխատողներ,
13	117-րդ կետ	ՇՊՀ-ի սովորողներ են համարվում ուսանողները և հետազոտողի կրթական ծրագրում (ասպիրանտներ) սովորող անձինք:	ՇՊՀ-ի սովորողներ են համարվում աշակերտները , ուսանողները և հետազոտողի կրթական ծրագրում (ասպիրանտներ, հայցորդներ) սովորող անձինք:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ՇՊՀ կանոնադրության մեջ առաջարկվող որոշ ձևակերպումների և մասնակի անճշտությունների փոփոխությունները, այն ներկայացնել հոգաբարձուների խորհրդի քննարկմանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՄԵՑԻՆ՝

«ՇՊՀ» պահպանվող և արխիվացվող փաստաթղթերի ցանկը՝ ժամկետների նշումով» նախագծի հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «ՇՊՀ» պահպանվող և արխիվացվող փաստաթղթերի ցանկը՝ ժամկետների նշումով» նախագիծը, գիտական խորհրդի անդամներին առաջարկել ընթացակարգի մասին կատարել առաջարկություններ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՄԵՑԻՆ՝

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) թեմաների մրցույթում հայտի ներկայացում

Հաղ.՝ Ֆ. մ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր **Ս.**

Սարգսյան

Պարոն Ս. Սարգսյանն ներկայացրեց, որ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) թեմաների մրցույթում ներկայացվում է հայտ:

Թեմա՝ «Միկրոպլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների ըստ կայունության հաշվարկի հիմունքները»:

Հետազոտական խմբի անդամներն են.

1. Սարգսյան Արմենուհի Հակոբի – ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, մասնագիտական դասիչը՝ Ա. 02.04 – դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա, թեմայի գիտական ղեկավար,
2. Սարգսյան Սամվել Հովհաննեսի – ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մասնագիտական դասիչը՝ Ա. 02.04 – դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա, գլխավոր գիտաշխատող,
3. Ժամակոչյան Քնարիկ Արարատի – գիտաշխատող:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Երաշխավորել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) թեմաների մրցույթում «Միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների ըստ կայունության հաշվարկի հիմունքները» թեմայով հայտի ներկայացումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ՝

2017-2018 ուստարում կցագրված հայցորդների ուսումնական- հետազոտական անհատական պլանների, գիտական ղեկավարների և թեմաների հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր **Ա. Ֆարմանյան**

2017-2018 ուստարում կցագրված հայցորդների գիտական ղեկավարների և թեմաների հաստատման մասին

№	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ամբիոն	Մասնագիտություն	Գիտության ոլորտ	Թեմա	Գիտական ղեկավար
1.	Հովհաննիսյան	Անահիտ	Հովհաննես	Մանկավարժություն	Մանկավարժության տեսություն և պատմություն (դասիչ՝ ԺԳ.00.01)	Մանկավարժական գիտություններ	Տյուտորական գործունեության արժեքանական հիմքերը	Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռուզաննա Արամայիսի Մարդոյան
2.	Բաղդասարյան	Լենա	Սամվել	Մանկավարժություն	Մանկավարժության տեսություն և պատմություն (դասիչ՝ ԺԳ.00.01)	Մանկավարժական գիտություններ	Մահմանափակ կարողություններով երեխաների սոցիալական ապահարմարման հիմնախնդիրը և դրա լուծման ուղիները ներառական ուսուցման գործընթացում	Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռուզաննա Արամայիսի Մարդոյան

3.	Բարսեղյան	Աննա	Արտակ	Մանկավարժություն	Մանկավարժության տեսություն և պատմություն (դասիչ՝ ԺԳ.00.01)	Մանկավարժական գիտություններ	Մասնագիտական և անձնային կոմպետենցիաների համապատասխանության հիմնախնդիրը բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում	Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արտաշես Անդրանիկի Մկոյան
4.	Մելիքյան	Լուսինե	Հենրիկ	Մանկավարժություն	Մանկավարժության տեսություն և պատմություն (դասիչ՝ ԺԳ.00.01)	Մանկավարժական գիտություններ	Դպրոցական կարճատեսության կանխարգելման մանկավարժական պայմանները	Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Նիկոլայի Ազարյան
5.	Յուզբաշյան	Խաչատուր	Գեորգի	Մանկավարժություն	Մանկավարժության տեսություն և պատմություն (դասիչ՝ ԺԳ.00.01)	Մանկավարժական գիտություններ	Ջավախքի տարածաշրջանում «Կոխ» ազգային ըմբշամարտի զարգացման ուղիները	Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Նիկոլայի Ազարյան
6.	Վարդանյան	Ժենյա	Վարդան	Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (աշխարհագրություն) (դասիչ՝ ԺԳ.00.02)	Մանկավարժական գիտություններ	Բիվինի հակադարձ մեթոդի դերը ավագ դպրոցի աշխարհագրության ուսուցման գործընթացում (Հաստատված է ՀՊՄՀ-ում)	Մանկ. գիտ. դոկտոր, Մանուկ Աշոտի Մկրտչյան

7.	Բարսեղյան	Գոհար	Կամո	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (մաթեմատիկա) (դասիչ՝ ԺԳ.00.02)	Մանկավարժական գիտություններ	Մովորելու և սովորեցնելու կարողությունների ձեռքբերման հիմնախնդիրները մաթեմատիկական առարկաների ուսուցման գործընթացում	Մանկ. գիտ. դոկտոր, Մանուկ Աշոտի Մկրտչյան
----	-----------	-------	------	--	---	--------------------------------	--	--

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել 2017-2018 ուստարում կցագրված հայցորդների ուսումնական- հետազոտական անհատական պլանները, գիտական ղեկավարներին և թեմաները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

26 անդամ. կողմ՝ 26, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ս. Մինասյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
Գիտական քաղաքականության և
արտաքին համագործակցության
կառավարման կենտրոնի
տնօրեն-պրոռեկտոր
Ուսումնամեթոդական
գործընթացի կառավարման և
գործատուների հետ
համագործակցության կենտրոնի
տնօրեն-պրոռեկտոր՝
Արհմիութենական
կազմակերպության նախագահ՝
Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկանի ԺՊ՝
Ռազմական ամբիոնի պետի
տեղակալ՝
Ուսումնագիտական
խորհրդատվական կենտրոն-
գրադարանի տնօրեն՝
Ֆինանսատնտեսական
վերլուծությունների,
ծրագրավորման և
հաշվապահական հաշվառման
բաժնի վարիչ-գլխավոր
հաշվապահ՝
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի
պրոֆեսոր
Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի
պրոֆեսոր
Անգլերեն լեզվի և գրականության
ամբիոնի պրոֆեսոր՝
Հայոց լեզվի և գրականության
ամբիոնի դոցենտ
Մանկավարժության ամբիոնի
պրոֆեսոր՝
Պատմության և
փիլիսոփայության ամբիոնի
դոցենտ՝

Կ. Պետրոսյան

Ա. Ֆարմանյան

Ե. Սերոբյան

Վ. Խաչատրյան

Բ. Պողոսյան

Ե. Տոնոյան

Թ. Խաչատրյան

Ռ. Քալաջյան

Ս. Սարգսյան

Հ. Դրմեյան

Ա. Հովհաննիսյան

Ս. Հայրապետյան

Ռ. Մարդոյան

Հ. Խորիկյան

Ռուսաց լեզվի և գրականության
ամբիոնի դոցենտ՝
Միջմշակութային
հաղորդակցության և
գրոսաշրջության ամբիոնի
ասիստենտ՝
Մանկավարժության ամբիոնի
դոցենտ՝
Մանկավարժության ամբիոնի
դոցենտ՝
Ռրակի ապահովման և
կառավարման կենտրոնի
տնօրեն՝
Աշխարհագրության,
կենսաբանության և քիմիայի
ամբիոնի դոցենտ՝
Նախագորակոչային և
ֆիզիկական պատրաստություն
IV կուրսի ուսանող՝

Թ. Մելիքյան

Շ. Տեր-Աղամյան

Լ. Ղուկասյան

Լ. Հակոբյան

Ա. Սարգսյան

Լ. Մարտիրոսյան

Կ. Արամյան

Մանկավարժություն և մեթոդիկա
IV կուրսի ուսանող՝

Լ. Խաչատրյան

Անգլերեն լեզու և գրականություն
III կուրսի ուսանող՝
Կիրառական արվեստ III կուրսի
ուսանող՝
Մաթեմատիկա IV կուրսի
ուսանող՝
ՈւԳԸ նախագահ,
աշխարհագրություն I կուրսի
ուսանող (մագիստրատուրա)՝

Հ. Ավետիսյան

Ա. Մխիթարյան

Ն. Կոստանյան

Ք. Հարությունյան

ՈւՄ նախագահ, պատմություն II
կուրսի ուսանող
(մագիստրատուրա)՝
Պատմություն II կուրսի ուսանող
(հեռակա բակալավրիատ)

Ա. Մելքոնյան

Ա. Չարչոլյան